ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2022
02.2022
03.2022
04.2022
05.2022
06.2022
07.2022
08.2022
09.2022
10.2022
Հոկտեմբեր
11.2022
12.2022

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 30-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2022

Հոկտեմբեր

թիվ 10 (290)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ԱՅՈ» ՈՒՎԿ ՓԲԸ «ԱՐՄԱՎԻՐ» մասնաճյուղը գրանցելու մասին

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 168-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի ապրիլի 27-ի թիվ 53-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 174-Ն որոշումը ««Ֆինանսական կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 22-ը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»

10 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 179-Ն որոշումը «Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը հաստատելու մասին (2022 թվականի երրորդ եռամսյակ)»

11 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Գրանցվել է*** «ԱՅՈ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «ԱՐՄԱՎԻՐ» մասնաճյուղը (որոշում թիվ 1/504Ա):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի ապրիլի 27-ի թիվ 53-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով լրացուցիչ ժամանակ տրամադրել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի ապրիլի 27-ի թիվ 53-Ն որոշման հասցեատերերին՝ որոշմամբ սահմանված պահանջները կատարելու համար,

կարևորելով արտասահմանյան դրամական փոխանցումների անընդհատության և հայաստանյան վճարահաշվարկային համակարգին սահուն ինտեգրման ապահովումը,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի ապրիլի 27-ի ««Դրամական միջոցների փոխանցման Հայաստանյան և արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի համագործակցության կարգը» կանոնակարգ 19.1-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի ապրիլի 29-ի թիվ 105-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 53-Ն որոշման 4-րդ կետում «2022 թվականի հոկտեմբերի 1-ից» բառերը փոխարինել «2024 թվականի հունվարի 1-ից» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյան

30 սեպտեմբերի 2022 թ., N 168-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. սեպտեմբերի 30-ին (ՀՀԳՏ, 3.09. 2022):

«Ֆինանսական կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 22-ը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին[*]

Նպատակ ունենալով սահմանել միասնական մոտեցում բոլոր ֆինանսական կազմակերպությունների համար որոշակի առանձնահատկությունների հաշվառմամբ, ինչպես նաև սահմանել աուդիտորական ընկերությունների անկախության առավել արդյունավետ չափանիշներ,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 59-րդ հոդվածը, 84-րդ հոդվածի 1-ին մասը, 128-րդ հոդվածի 2-րդ մասը, «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքի 96-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ և 37-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Սահմանել «Ֆինանսական կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 22-ը (այսուհետ՝ Կանոնակարգ)՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

3. Որոշմամբ սահմանված Կանոնակարգի 11-րդ կետով սահմանված պահանջը պետք է ապահովվի 2023 թվականի և դրան հաջորդող տարիների աուդիտի իրականացման համար արտաքին աուդիտորական ընկերության ընտրության ժամանակ, բացառությամբ սույն որոշման 4-րդ կետի:

4. Եթե ֆինանսական կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում մինչև սույն որոշման ուժի մեջը մտնելը աուդիտորական ընկերության հետ կնքված պայմանագիր, որով սույն որոշման 3-րդ կետի համաձայն 2023 թվականին չի կարող ապահովել Կանոնակարգի 11-րդ կետի պահանջը, ապա այդ պահանջը պետք է ապահովի այդ պայմանագրի ժամկետի ավարտից հետո, եթե պայմանագրի ժամկետը քիչ է երեք տարուց: Եթե սույն կետով սահմանված պայմանագրի ժամկետը գերազանցում է երեք տարին, ապա ֆինանսական կազմակերպությունը Կանոնակարգի 11-րդ կետի պահանջը պետք է ապահովի պայմանագրի կնքման ժամկետից երեք տարի հետո:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշմամբ սահմանված կանոնակարգով նախատեսված ֆինանսական կազմակերպությունները պետք է անհրաժեշտության դեպքում ապահովեն Կանոնակարգի 2-րդ կետով սահմանված իրավական ակտերի համապատասխանեցումը Կանոնակարգի պահանջներին:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. հոկտեմբերի 4-ին (ՀՀԳՏ, 13.10. 2022):

6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի ««Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգը» հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի ««Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 3/11-ը հաստատելու մասին» թիվ 40-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի ««Ներդրումային ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/11-ը հաստատելու մասին» թիվ 41-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի «Հաշվետու թողարկողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/09-ը հաստատելու մասին» թիվ 226-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Ներդրումային ֆոնդի և դրա կառավարչի արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրության կարգը» կանոնակարգ 10/18-ը հաստատելու մասին» թիվ 321-Ն որոշումը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյան
10 հոկտեմբերի 2022 թ., N 174-Ն

Հավելված
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 174-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 22
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, ապահովագրական ընկերությունների, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերի, ներդրումային ընկերությունների, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի, ներդրումային ֆոնդերի (այդ թվում՝ կենսաթոշակային ֆոնդերի), դրանց կառավարիչների և հաշվետու թողարկողների (այսուհետ՝ սույն կարգի իմաստով ֆինանսական կազմակերպություններ, եթե այլ բան սահմանված չէ սույն իրավական ակտով) կողմից անկախ աուդիտորական կազմակերպությանը ներկայացվող չափանիշները:

2. Ֆինանսական կազմակերպության ներքին իրավական ակտով սահմանվում է աուդիտորական կազմակերպության ընտրության նկատմամբ սույն կանոնակարգի Գլուխ 2-ով սահմանված չափանիշները մանրամասնող և դրանց գործնական կիրառումն ապահովող ընթացակարգեր, չափանիշների կիրառման մեթոդաբանություն, աուդիտի ընդգրկման բնագավառներ և սույն կանոնակարգի պահանջների կատարումն ապահովող այլ դրույթներ: Սույն կետով սահմանված պահանջն անձն իրականացնում է հաշվետու թողարկող համարվելու պահից երեք ամսվա ընթացքում և ներքին իրավական ակտն ընդունելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Կենտրոնական բանկ: Ֆինանսական կազմակերպությունները ներքին իրավական ակտով կարող են սահմանել սույն կանոնակարգի Գլուխ 2-ում սահմանված չափանիշներին չհակասող այլ չափանիշներ:

3. Սույն կանոնակարգի իմաստով աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը աուդիտորական կազմակերպության աուդիտորական եզրակացությունը ստորագրող անձն է:

ԳԼՈՒԽ 2. ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4. Ֆինանսական կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող աուդիտորական կազմակերպությունը պետք է լինի «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մասնագիտացված կառույցի (այսուհետ՝ սույն կանոնակարգում Մասնագիտացված կառույց) անդամ:

5. Բանկերի, ապահովագրական ընկերությունների, դրանց օտարերկրյա մասնաճյուղերի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող աուդիտորական կազմակերպությունը պետք է ունենա բանկում կամ ապահովագրական ընկերությունում աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ, այլ ֆինանսական կազմակերպությունների համար (բացառությամբ հաշվետու թողարկողի)՝ ֆինանսական կազմակերպությունների (բացառությամբ հաշվետու թողարկողի) աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ, իսկ հաշվետու թողարկողների համար՝ առնվազն 3 տարվա աուդիտի իրականացման փորձ: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում ըստ միջազգային խմբի տարեկան համախառն հասույթի մակարդակի առաջին 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպությունների վրա:

6. Ֆինանսական կազմակերպության (բացառությամբ՝ հաշվետու թողարկողի) ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է լինի Մասնագիտացված կառույցի անդամ, ունենա ֆինանսական կազմակերպության (բացառությամբ՝ հաշվետու թողարկողի) աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 5 ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ, ինչպես նաև՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորում և միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորման վկայական (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ):

7. Հաշվետու թողարկողի դեպքում աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է լինի Մասնագիտացված կառույցի անդամ, ունենա աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ, ինչպես նաև՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորում և միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորում (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ):

8. Աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է լինեն Մասնագիտացված կառույցի անդամ, ունենան աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ, ինչպես նաև՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորում կամ միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորում (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ):

9. Ապահովագրական ընկերության դեպքում աուդիտորական կազմակերպության աուդիտորական խմբում պետք է ընդգրկված լինի համապատասխան գիտելիքներ և համապատասխան որակավորում ունեցող ակտուար, որը պետք է ունենա առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ ակտուարական ոլորտում: Ընդ որում, ակտուարի համապատասխան որակավորումը հավաստող փաստաթուղթ է հանդիսանում օտարերկրյա կազմակերպության կողմից տրված ակտուարի որակավորումը (օրինակ՝ Սի-Ի-Ար-Էյ, ԷՖ-Այ-Էյ, ԷՖ-Այ-Էյ-Էյ, Էս-Էյ-Օ, Սի-Էյ-Էս) հավաստող համապատասխան փաստաթուղթը:

10. Աուդիտորական կազմակերպությունը ֆինանսական կազմակերպության հետ կնքվող պայմանագրով համաձայնություն է տալիս Կենտրոնական բանկի հրավերով մասնակցելու ֆինանսական կազմակերպության աուդիտորական կազմակերպության և Կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը:

11. Ֆինանսական կազմակերպության և աուդիտորական կազմակերպության միջև պայմանագիրը կարող է կնքվել մինչև 3 տարի ժամկետով: Աուդիտորական կազմակերպությունը կարող է իրականացնել միևնույն ֆինանսական կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը անընդմեջ առավելագույնը 6 տարի, ընդ որում, տվյալ աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը կարող է իրականացնել տվյալ ֆինանսական կազմակերպության աուդիտը առավելագույնը 3 տարի: Աուդիտորական կազմակերպությունը սույն կետում նշված 6 տարի անընդմեջ աուդիտի իրականացման դեպքում չի կարող իրականացնել տվյալ ֆինանսական կազմակերպության աուդիտը առնվազն 3 տարի: Սույն կետի պահանջները չեն տարածվում այն ֆինանսական կազմակերպությունների վրա, որոնք հանդիսանում են միջազգային ֆինանսական խմբի անդամ և որոնց առանձին ֆինանսական հաշվետվությունները համախմբվում են խմբի ֆինանսական հաշվետվությունների հետ:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի ապրիլի 27-ի թիվ 53-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 1%-ի չափով: Սահմանված դրույքաչափը ուժի մեջ է (պարտադիր է կատարման) 2023 թվականի մայիսի 1-ից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

24 հոկտեմբերի 2022 թ., N 179-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. սեպտեմբերի 30-ին (ՀՀԳՏ, 3.09. 2022):

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈԿՏԵՄԲԵՐ 2022)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
Էլփոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 15
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների փոփոխություն
Գնաճ
Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին ամենամեծ նպաստումն ունեցող ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 19
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 24
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 25
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 35
Տոկոսադրույքներ
Բանկային փոկոսի հաշվարկային դրույքը
ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ-ի կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ԿԲ-ի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 56
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 66
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 68
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 77
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	*2022 թ. սեպտեմբեր*	*2022 թ. սեպտեմբերի իրական աճի փոփոխությունը 2021 թ. սեպտեմբերի նկատմամբ (%)*	*2022 թ. հոկտեմբեր*	*2022 թ. հոկտեմբերի իրական աճի փոփոխությունը 2021 թ. հոկտեմբերի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		14.6		17.5
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	235827.1	14.8	246721.4	9.7
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	57121.1	14.6	60547.8	15.1
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	411877.0	20.7	405684.3	23.1
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	237049.3	26.3	250024.8	34.9
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	656.6	19.3	673.9	15.7
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	293472[1]	6.1[2]	293784 [3]	8.4[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2022 թ.	*Գնաճ*	*Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը*	*Գների փոփոխությունը շինարարությունում*	*Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների փոփոխությունը*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	1.6	0.9	0.8	4.0
Փետրվար	0.1	3.7	1.3	0.2
Մարտ	1.8	2.0	-0.8	-0.2
Ապրիլ	2.3	-2.4	0.5	-1.3
Մայիս	0.1	-3.1	1.0	-4.5
Հունիս	0.3	-2.9	0.1	-8.4
Հուլիս	-1.4	-4.3	-0.1	-10.3
Օգոստոս	0.2	-1.8	0.1	-15.4
Սեպտեմբեր	0.6	2.9	-0.2	-6.2
Հոկտեմբեր	0.3	0.7	0.0	4.7
2022 թ. հունվար - հոկտեմբերը 2021 թ. հունվար - հոկտեմբերի նկատմամբ	8.7	3.4	6.7	13.4

ԳՆԱՁ

Ժամանակաշրջան	2020	2021	2022
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	1.4	2.2	1.6
Փետրվար	-0.2	0.6	0.1
Մարտ	0.5	1.0	1.8
Ապրիլ	0.9	1.3	2.3
Մայիս	-0.1	-0.4	0.1
Հունիս	-1.4	-0.8	0.3
Հուլիս	-2.1	-0.5	-1.4
Օգոստոս	-0.1	0.4	0.2
Սեպտեմբեր	-0.2	-0.1	0.6
Հոկտեմբեր	0.5	0.7	0.3
Նոյեմբեր	1.3	1.7	
Դեկտեմբեր	3.4	1.6	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.3	4.5	7.1
Փետրվար	-0.5	5.3	6.5
Մարտ	-0.1	5.8	7.4
Ապրիլ	0.9	6.2	8.4
Մայիս	1.2	5.9	9.0
Հունիս	1.7	6.5	10.3
Հուլիս	1.5	8.2	9.3
Օգոստոս	1.8	8.8	9.1
Սեպտեմբեր	1.4	8.9	9.9
Հոկտեմբեր	1.3	9.1	9.5
Նոյեմբեր	1.6	9.6	
Դեկտեմբեր	3.7	7.7	

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՁԻՆ [5]

Անվանում	2022 թ. հոկտեմբերը 2021 թ. հոկտեմբերի նկատմամբ (%)	Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)
Գնաճ	**9.5**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	12.5	4.65
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	8.5	0.34
Հագուստ և կոշիկ	8.7	0.27
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	7.8	1.25
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	10.9	0.52
Առողջապահություն	2.7	0.24
Տրանսպորտ	9.0	0.88
Կապ	0.6	0.03
Հանգիստ և մշակույթ	14.1	0.25
Կրթություն	4.7	0.20
Ռեստորաններ և հյուրանոցներ	9.3	0.10
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	11.9	0.77

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [5,6]

Ժամանակաշրջան	2020	2021	2022
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.0	0.7	0.3
Փետրվար	0.1	0.8	0.6
Մարտ	0.0	0.8	1.1
Ապրիլ	0.5	0.6	1.3
Մայիս	0.0	0.4	0.7
Հունիս	-0.1	0.3	1.0
Հուլիս	-0.1	0.3	0.7
Օգոստոս	0.1	0.3	0.4
Սեպտեմբեր	0.3	0.3	0.7
Հոկտեմբեր	0.3	0.4	0.3
Նոյեմբեր	0.3	0.6	
Դեկտեմբեր	0.9	0.5	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.4	3.0	5.8
Փետրվար	0.4	3.7	5.6
Մարտ	0.3	4.6	5.9
Ապրիլ	0.8	4.6	6.6
Մայիս	0.8	5.1	7.0
Հունիս	0.7	5.5	7.8
Հուլիս	0.8	5.9	8.3
Օգոստոս	0.8	6.1	8.3
Սեպտեմբեր	0.9	6.1	8.7
Հոկտեմբեր	1.2	6.2	8.6
Նոյեմբեր	1.4	6.6	
Դեկտեմբեր	2.2	6.2	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[5,6]

Անվանում	2022 թ. հոկտեմբերը 2021 թ. հոկտեմբերի նկատմամբ	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
Բնականոն գնաճ, այդ թվում՝	**8.6**	
Հաց ցորենի՝ բարձր տեսակի	19.8	0.85
Միս տավարի և հորթի՝ ոսկորով՝ թարմ կամ պաղեցրած	25.3	0.78
Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղիների համար	55.7	0.55
Գազ՝ փոխադրամիջոցների լիցքավորման համար	6.1	0.36
Օդային տրանսպորտի միջազգային չվերթեր իրականացնող ծառայություններ	52.7	0.34
Պանիր կովի կաթից	20.4	0.29
Լվացքի փոշի ավտոմատ մեքենայի համար	11.7	0.17
Բարձրագույն կրթության հաստատությանը վճարված ուսուցման վարձը	4.6	0.16
Միջազգային հանգստի կազմակերպման համալիր ծառայություններ	29.4	0.16
Պանիր տնական	27.4	0.15
Մածուն	24.9	0.15
Մազերի ներկ	28.3	0.14
Օճառահեղուկ (շամպուն)	21.2	0.14
Ալյուր ցորենի՝ բարձր տեսակի	13.3	0.13
Թխվածքաբլիթ, պաքսիմատ, վաֆլու շերտեր	21.8	0.11

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայած տվյալների հիման վրա:

[3] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների:

[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:

[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	2022 թ. հունվար – սեպտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2022 թ. հունվար - սեպտեմբերը 2021 թ. հունվար - սեպտեմբերի նկատմամբ (%)	2022 թ. հունվար – հոկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2022 թ. հունվար - հոկտեմբերը 2021 թ. հունվար - հոկտեմբերի նկատմամբ (%)
Արտահանում *(ՖՕԲ)*	3509.4	163.8	4129.4	171.2
Ներմուծում *(ՍԻՖ)*	5797.2	161.6	6755.8	163.5
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	2287.8	158.4	2626.4	152.7

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2021 թվական					
	հոկտեմբեր			հունվար – հոկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	78374	34849	43524	711853	323256	388598
ԱՄՆ	52422	16779	35644	469053	155198	313855
Ուկրաինա	1699	2099	-400	14927	15683	-756
Ղազախստան	7700	494	7207	74499	4938	69561
Գերմանիա	5438	2155	3284	56519	25653	30866
Իսպանիա	1497	1692	-195	12342	13606	-1263
Ֆրանսիա	3704	2030	1674	47356	15615	31741
ԱՄԷ	1517	4468	-2951	19013	27131	-8118
Չինաստան	87	6817	-6730	1922	60923	-59001
Թուրքիա	134	710	-576	1369	4856	-3487
Այլ երկրներ	32862	40566	-7705	313387	332394	-19007
Ընդամենը	**185436**	**112659**	**72777**	**1722242**	**979254**	**742988**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2022 թվական					
	հոկտեմբեր			հունվար – հոկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	482979	41120	441859	2800560	335723	2464837
ԱՄՆ	58449	32614	25835	551053	242863	308190
Ուկրաինա	6	1587	-1580	3802	19166	-15364
Ղազախստան	2796	680	2116	40591	6826	33765
Գերմանիա	6688	10990	-4302	61009	87828	-26818
Իսպանիա	1003	9239	-8236	12984	45859	-32875
Ֆրանսիա	3187	5513	-2326	46553	39401	7152
ԱՄԷ	5373	34714	-29341	30632	191214	-160582
Չինաստան	279	7790	-7511	2936	69910	-66974
Թուրքիա	103	828	-725	1312	8247	-6935
Այլ երկրներ	57187	146052	-88865	528193	976128	-447935
Ընդամենը	**618051**	**291127**	**326923**	**4079626**	**2023165**	**2056460**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2021 թվական					
	հոկտեմբեր			հունվար – հոկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	37579	16721	20858	359925	164103	195822
ԱՄՆ	25124	8037	17086	237605	78784	158821
Ուկրաինա	814	1005	-190	7564	7936	-373
Ղազախստան	3692	237	3455	37671	2497	35175
Գերմանիա	2604	1032	1572	28765	13047	15718
Իսպանիա	717	809	-92	6267	6885	-618
Ֆրանսիա	1776	972	804	24121	7932	16189
ԱՄԷ	727	2137	-1409	9613	13705	-4092
Չինաստան	42	3265	-3224	974	30845	-29871
Թուրքիա	64	340	-276	698	2450	-1752
Այլ երկրներ	15748	19467	-3719	158777	168507	-9730
Ընդամենը	**88887**	**54022**	**34865**	**871979**	**496690**	**375289**

մլն ՀՀ դրամ

Երկիր	2022 թվական					
	հոկտեմբեր			հունվար – հոկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	194560	16579	177981	1190541	149646	1040895
ԱՄՆ	23541	13129	10412	243479	106712	136767
Ուկրաինա	3	639	-637	1811	8384	-6573
Ղազախստան	1128	274	853	18125	2998	15127
Գերմանիա	2695	4428	-1733	26986	37599	-10613
Իսպանիա	404	3733	-3330	5776	19643	-13867
Ֆրանսիա	1284	2222	-938	20934	17052	3882
ԱՄԷ	2163	13976	-11812	13373	82304	-68931
Չինաստան	112	3136	-3023	1271	30579	-29308
Թուրքիա	42	333	-292	582	3651	-3069
Այլ երկրներ	23055	58837	-35783	232021	414728	-182707
Ընդամենը	**248985**	**117287**	**131698**	**1754900**	**873296**	**881604**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3,4]

2021	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	140.1	139.6	140.5	142.9	140.4	140.8	147.6	147.6	147.5	150.3	154.8	157.1
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	292.5	291.8	293.3	296.4	294.0	298.8	316.4	316.5	318.8	326.4	333.7	337.4

2022	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	159.1	157.9	162.7	164.8	165.7	174.3	180.2	185.7	186.8	191.1		
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	340.9	342.5	358.2	360.5	365.5	389.0	409.8	423.4	426.5	439.5		

[1] Հաշվարկում ընդգրկված են 12 գործընկեր երկրների փվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը, 2007-2011 թթ. կշիռներով, 1997=100:

[2] Բոլոր փվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

[3] Աճը նշանակում է արժևորում:

[4] Վերանայվել են Իրանի Իսլամական Հանրապետության փվյալները, մասնավորապես՝ ազգային արժույթի փոխարժեքի մասով: Սկսած 2018 թվականի հունվարից՝ ԻԻՀ կենտրոնական բանկի փվյալների փոխարեն օգտագործվել են արտարժույթի շուկայի փվյալները, իսկ ՍԳԻ հաշվարկներում՝ ԻԻՀ վիճակագրական ծառայության փվյալները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]


մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2021	2022									
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ[3]	Հ	Օ	Ս[3]	Հ
Համախառն միջազգային պահուստներ	**3229.9**	**3138.1**	**3012.6**	**2940.3**	**3068.4**	**3151.2**	**3450.6**	**3546.2**	**3621.5**	**3739.1**	**3633.1**
Ոսկի	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	32.8	32.6	31.1	51.4	49.8	46.6	28.2	24.4	20.6	18.9	19.1
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Արտարժույթ [2]	3197.0	3105.5	2981.6	2889.0	3018.6	3104.6	3422.3	3521.8	3601.0	3720.2	3614.1

[1] *Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2021	2022									
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ[2]	Հ	Օ	Ս[2]	Հ
Համախառն արտաքին պարտավորություններ	**758.6**	**768.2**	**775.7**	**800.5**	**808.4**	**873.5**	**892.7**	**829.0**	**819.8**	**811.6**	**820.3**
ԱՄՀ վարկ	109.7	109.1	109.1	107.1	103.8	137.7	122.1	117.4	115.8	112.4	113.5
ՀՓԻ տեղաբաշխում	296.0	294.1	294.8	292.6	283.5	285.4	282.1	279.0	276.1	270.5	273.0
Այլ վարկեր	349.2	361.5	369.6	368.5	384.2	401.8	418.0	431.3	425.5	426.1	426.7
Այլ պարտավորություններ	3.7	3.4	2.1	32.3	36.9	48.5	70.4	1.3	2.4	2.6	7.0

[1] *Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*

[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

	Պահանջներ Կառավարության նկատմամբ	Պարտավորություններ Կառավարության նկատմամբ	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	Պետական պարտատոմսեր	Կառավարության ավանդներ և հաշիվներ (ներառյալ՝ ԾԻԳ-ի միջոցները)	
2021			
Դեկտեմբեր[1]	9698	403542	**-393844**
2022			
Հունվար	9780	482083	**-472303**
Փետրվար	9598	464595	**-454997**
Մարտ	9270	503701	**-494431**
Ապրիլ	8969	487067	**-478098**
Մայիս	9149	487627	**-478478**
Հունիս	9147	530485	**-521338**
Հուլիս	9217	515641	**-506424**
Օգոստոս	9080	503842	**-494763**
Սեպտեմբեր	8997	507727	**-498731**
Հոկտեմբեր	8801	437441	**-428640**

[1] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

	Փողի բազա [1] (մլն ՀՀ դրամ)	Շրջանառությունում կանխիկ դրամ (մլն ՀՀ դրամ)	Ցպահանջ ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M1 [2] (մլն ՀՀ դրամ)	Ժամկետային ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M2 [3] (մլն ՀՀ դրամ)	Արտարժութային ավանդներ (մլն ՀՀ դրամ)	M2X [4] (մլն ՀՀ դրամ)	Փողի բազմապատիկ [5]	Դրամային զանգվածի բազմապատիկ [6]
2021										
Դեկտեմբեր	1830705	636088	731216	1367304	1095528	2462832	1339774	3802606	2.08	2.08
2022										
Հունվար	1641948	581244	693873	1275118	1121345	2396463	1339232	3735695	2.28	2.37
Փետրվար	1579396	560377	692190	1252568	1132112	2384680	1371985	3756665	2.38	2.39
Մարտ	1607433	584838	701905	1286743	1128286	2415029	1388970	3803999	2.37	2.24
Ապրիլ	1618402	577186	713991	1291178	1133169	2424347	1301345	3725691	2.30	2.25
Մայիս	1591449	583032	735799	1318831	1135750	2454581	1361002	3815583	2.40	2.38
Հունիս	1692357	610648	753364	1364011	1124263	2488274	1325745	3814019	2.25	2.21
Հուլիս	1666241	611996	803589	1415585	1093111	2508696	1387507	3896204	2.34	2.47
Օգոստոս	1633280	622637	843465	1466102	1094549	2560651	1397257	3957908	2.42	2.61
Սեպտեմբեր	1778555	638551	836332	1474883	1090893	2565776	1484206	4049982	2.28	2.37
Հոկտեմբեր	1723378	635566	890450	1526017	1093005	2619021	1507020	4126041	2.39	2.38

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
2000000
1800000
1600000
1400000
1200000
1000000
800000
600000
400000
200000
0
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
4500000
4000000
3500000
3000000
2500000
2000000
1500000
1000000
500000
0
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
20
15
10



Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
35
30
25
20


ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1]


մլն ՀՀ դրամ


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2021					
Դեկտեմբեր	1652830	595844	1285113	2379895	3708664
2022					
Հունվար	1671765	584705	1285736	2408319	3740476
Փետրվար	1627226	576859	1269489	2392663	3744687
Մարտ	1607675	601765	1300820	2432865	3784547
Ապրիլ	1654277	595859	1321024	2469604	3794324
Մայիս	1617993	597162	1340527	2491253	3848815
Հունիս	1672814	611386	1368378	2503155	3851961
Հուլիս	1667716	604078	1392796	2493643	3894733
Օգոստոս	1647087	609605	1445726	2534256	3931024
Սեպտեմբեր	1753684	627155	1462193	2556951	4042913
Հոկտեմբեր	1740906	627256	1512916	2609677	4096500

[1] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով, ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի տարվա առաջին համարում: Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով Census X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
2000000
1500000
1000000
500000
Փողի բազայի փաստացի շարքեր
Փողի բազայի հարթեցված շարքեր


Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
700000
600000
500000
400000
300000
200000
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի շարքեր
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի հարթեցված շարքեր


Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
2900000
2500000
2100000
1700000
1300000
900000
500000
Դրամային զանգվածի փաստացի շարքեր
Դրամային զանգվածի հարթեցված շարքեր


Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
4600000
4200000
3800000
3400000
3000000
2600000
2200000
1800000
1400000
1000000
Փողի զանգվածի փաստացի շարքեր
Փողի զանգվածի հարթեցված շարքեր

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2021	2022									
	Դ[2]	Հ	Փ	Մ[2]	Ա	Մ	Հ[2]	Հ	Օ	Ս[2]	Հ
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)											
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***1186554***	***1144135***	***1082518***	***1039788***	***1024374***	***1020392***	***1041568***	***1107826***	***1133443***	***1187545***	***1112191***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***644150***	***497813***	***496878***	***567646***	***594028***	***571058***	***650789***	***558415***	***499836***	***591009***	***611187***
Կառավարություն	-393844	-472303	-454997	-494431	-478098	-478478	-521338	-506424	-494763	-498731	-428640
Բանկեր	696379	621756	604884	706432	702951	659013	750236	636880	561902	662521	593758
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	485415	410446	380428	445106	438344	385598	445194	330341	252000	322180	257847
ՀՀ ԿԲ-ի կողմից արտարժույթի ներգրավման սվոպ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Դրամական միջոցների ներգրավում (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ-ի կողմից արտարժույթի տրամադրման սվոպ (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	341615	348361	346991	355645	369175	390523	421891	427960	432697	427220	446068
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***1830705***	***1641948***	***1579396***	***1607433***	***1618402***	***1591449***	***1692357***	***1666241***	***1633280***	***1778555***	***1723378***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	747166	687813	668779	676462	672631	680165	708136	719859	726574	748565	747340
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	408818	294449	298984	369942	372639	320638	387618	263463	223373	301147	320967
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	635070	615868	572298	519596	531190	550712	556925	641125	645524	687442	618557
Այլ հաշիվներ	39651	43818	39336	41433	41942	39934	39678	41794	37808	41400	36515
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	27555	30227	29866	31787	32686	30964	31147	31828	31946	31537	31916
Այլ հաշիվներ արտարժույթով	12096	13592	9470	9646	9257	8970	8531	9966	5862	9863	4599
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)											
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	-	***-42419***	***-61617***	***-42730***	***-15414***	***-3982***	***21177***	***66258***	***25617***	***54102***	***-75354***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***-146337***	***-935***	***70768***	***26382***	***-22970***	***79731***	***-92374***	***-58579***	***91173***	***20178***
Կառավարություն	-	-78457	17306	-39434	16333	-380	-42860	14914	11662	-3968	70091
Բանկեր	-	-74624	-16872	101548	-3481	-43938	91224	-113357	-74978	100619	-68762
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	-74969	-30017	64678	-6763	-52745	59596	-114853	-78341	70180	-64333
Դրամական միջոցների ներգրավում (-)	-	0	0	0	0	0	0	0	0	0	0
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	-	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0	0	0	0	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	6743	-1369	8654	13530	21348	31368	6069	4738	-5478	18849
ՓՈՂԻ ԲԱԶԱ	-	***-188757***	***-62552***	***28037***	***10969***	***-26953***	***100908***	***-26116***	***-32962***	***145275***	***-55176***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-59353	-19035	7684	-3831	7535	27970	11723	6715	21991	-1226
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	-114369	4535	70958	2697	-52002	66981	-124155	-40090	77774	19820
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-19202	-43570	-52702	11594	19523	6213	84200	4399	41918	-68885
Այլ հաշիվներ	-	4168	-4483	2098	509	-2008	-256	2116	-3986	3592	-4885
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	-	2672	-360	1921	898	-1722	183	681	118	-409	379
Այլ հաշիվներ արտարժույթով	-	1496	-4122	176	-389	-287	-439	1435	-4104	4001	-5264
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)											
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	-	***-3.6***	***-5.4***	***-3.9***	***-1.5***	***-0.4***	***2.1***	***6.4***	***2.3***	***4.8***	***-6.3***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***-22.7***	***-0.2***	***14.2***	***4.6***	***-3.9***	***14.0***	***-14.2***	***-10.5***	***18.2***	***3.4***
Կառավարություն	-	-19.9	3.7	-8.7	3.3	-0.1	-9.0	2.9	2.3	-0.8	14.1
Բանկեր	-	-10.7	-2.7	16.8	-0.5	-6.3	13.8	-15.1	-11.8	17.9	-10.4
ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Զուտ այլ ակտիվներ	-	2.0	-0.4	2.5	3.8	5.8	8.0	1.4	1.1	-1.3	4.4
ՓՈՂԻ ԲԱԶԱ	-	***-10.3***	***-3.8***	***1.8***	***0.7***	***-1.7***	***6.3***	***-1.5***	***-2.0***	***8.9***	***-3.1***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-7.9	-2.8	1.1	-0.6	1.1	4.1	1.7	0.9	3.0	-0.2
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	-28.0	1.5	23.7	0.7	-14.0	20.9	-32.0	-15.2	34.8	6.6
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-3.0	-7.1	-9.2	2.2	3.7	1.1	15.1	0.7	6.5	-10.0
Այլ հաշիվներ	-	10.5	-10.2	5.3	1.2	-4.8	-0.6	5.3	-9.5	9.5	-11.8

[1] Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը:

[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2021	2022									
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ
